

ՄԷԼԵՏԱՔԵՐ



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ՓԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԺԷ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1888

ԹԻԻ 3

ՀԱՆՆԻՆԿԻՐՆ ԵԳԻՍԿՈՊՈՍ

Մինչև անգամ այս իննև տասաներորդ դարուս վերջին քառորդին մէջ կան ֆրիստոնեայ մարտիրոսներ: Ահա անոնց միոյն պատկերը: Որպիսի՞ ազնիւ, արիական դէմք մը ունի: Եւ այսպէս ազնիւ ո՞րչափ մարդիկ ցիցը կապուելով այրուած են ողջ ողջ կամ իրենց գլուխը դրած են կառափնարանին վրայ այն ժամանակէն հետէ որ Յիսուս ըսաւ, “Գացէք բոլոր աշխարհ, ու Աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն:”

Ճէյմս Հաննինկըրն, Օքսֆորտի հռչակաւոր համալսարանէն ընթացաւորտի փկայական ընդունելէն ետքը, մտաւ Անգղիական եկեղեցւոյ պաշտօնէ ու թեան, բայց եօթն տարի շատ օգտակարութեամբ աշխատելէն ետքը իւր հայրենաց մէջ, զգաց թէ կը կոչուէր ուրիշ և աւելի դժուարին ծառայութեան:

Չորս անձինք ութ անձերէն զորս Անգղիական եկեղեցին զրկեց նոր առաքելութիւն մը հաստատել վիթթորիա Նիանդա լճին վրայ, Ափրիկէի խորերը, մեռան տասնևութ ամսոյ մէջ, և ուստի Մր. Հաննինկըրն ուզելով երթալ, ինքզինք առաջարկեց միսիոնարական ընկերութեան:

Գնաց 1882ին, բայց ծանրապէս հիւանդացաւ բաց օդին մէջ մնալով, և ետ դարձաւ Անգղիա: Այն ինչ նորէն առողջացաւ, խնդրեց կրկին զրկուիլ հոն, վասն զի իւր սիրան էր յԱփրիկէ: Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ, և



ՀԱՆՆԻՆԿԻՐՆ ԵԳԻՍԿՈՊՈՍ

նաւ մտաւ 1884, Նոյեմբեր ամսուն: 1885, Նույնիսն ճամբայ ելաւ Ափրիկէի ծովեզրէն երթալ ներսերը, բայց շուտեց որ ուրիշ սպիտակամորթ մարդիկ ընկերանային իրեն՝ ճամբուն վրտանգներուն համար: Կը յուսար շուտով գտնել երեք միսիոնարները և հարիւր բնիկ նորահաւատները որ կը գտնուէին յՈւկանտա. բայց տեղոյն թագաւորը ձերբակալել տուաւ թէ՛ զՀաննինկըրն և թէ՛ նորա յիսուն ուղեկիցները, և զանոնք երկու շաբաթ բանտարկելէ ետքը հրամայեց որ ամէնքն ալ սպաննուին: Բնիկք սպաննուեցան տէգով, իսկ Հաննինկըրն Եպիսկոս զարնուեցաւ բուն իսկ իւր հը-

Րացանով:

Իւր բանտարկութեան միջոցին ըրած օրագրութիւնը ձեռք բերուած է, և կը ցուցնէ թէ ի՞նչպէս արիասիրտ էր նա և հպատակ Տէրոջ կամքին: Լուր դրկեց թագաւորին թէ ինք իւր կեանքով գնած էր Ուկանտայի ճամբան, և թէ կը մեռնէր անոր ժողովրդեան բարոյն համար: Վայրենի թագաւորն այնուհետև հալածանք հանեց բնիկ ֆրիստոնեկց դէմ որք դեռ նոր ելած էին հեթանոսութենէ, և անոնցմէ բազումք աւելի ընտրեցին մեռնիլ իբրև մարտիրոս՝ քան թէ ուրանալ իրենց սիրած ֆրիկիւր:

ՅԱՐԱՏՆԻՈՒԹԻՒՆ

Հետևեալ պատմութիւնը Սկովտոյ կլասքոյ քաղաքին տարազագործու-


թեան ընկերութեան մը պատահած գէպերէն մին է: Երեսուն տարի առաջ ընկերութեան բաժանորդներէն գլխաւորին գրասեղանին առջև երևցաւ բոկոտան, ցնցոտիներ հազած տղայ մը և խնդրեց որ գործածէին զինք նամակ, աւանդ և այլն տանել բերելու: “Բաւական գործեր ունինք,” ըսաւ Մր. Պլէնք, “բայց քու ընելիք առաջին գործդ է զոյգ մը կոշիկ ունենալ:” Տղան լուրջ կերպով խոնարհեցուց իւր գլուխը և անյայտ եղաւ: Իւր ապրուստը կը ճարէր այլ և այլ գործեր ընելով շուկային մէջ, և գիշերները կը պառկէր խանութի մը ներքև: Երկու ամսէն հազու կարող եղաւ ստակ շահել կոշիկը գնելու: Այնուհետև ներ-

կայացաւ առաւօտ մը Մր. Պէնքի և անոր երկնցուց ծրար մը : «Ես հիմա ունիմ կօշիկները ,» ըսաւ հանդարտ կերպով : Մր. Պէնքը դժուարաւ միտքը բերաւ տղին պարագաները , «Դուն գործ կ'ուզես : Բայց ոչ այդ ցնցոտիներով , տղաս ,» ըսաւ , «դուն նախատինք կը բերես վաճառատանս :»

Տղան վարանեցաւ վայրիկ մի , և յետոյ ելաւ գնաց առանց խօսք մը զրուցելու : Վեց ամէն էտքը դարձեալ եկաւ , վայելչապէս հագուած՝ թէպէտ խոշոր (տալ) բայց նոր հան-

ներևութացաւ այն տեղէն : Այս անգամ գնաց տանուհինգ մղոն ներս տեղ մը , և գտաւ գործ ախոռներու ծառայութիւն ընելու որոյ մօտ կար գիշերային դպրոց մը : Տարւոյն վերջը դարձեալ երևցաւ Մր. Պէնքի առջև : «Ես կրնամ կարգալ և գրել ,» ըսաւ կարճառօտ կերպով : «Ես գործ տուի անոր ,» ըսաւ վաճառականը տարիներ ետքը , «սա համոզմամբ որ յետ ժամանակաց կարող պիտի ըլլար իմ գործըս կատարել եթէ որչէր իւր մտքին մէջ ընել զայն : Մարդիկ , կամաց

մէջ որ տարաւ նաւը բուռն ուժգնութեամբ և զարկաւ բուստի կղզւոյ մը : Գիտելի է թէ այս կղզիները կը շինուին շատ մանր միջատներէ , և թէպէտ իւրաքանչիւր միջատ յոյժ փոքր յաւելուած մը կ'ընէ գործին վրայ , սակայն անոնցմէ բազում միլիոններով մէկ տեղ աշխատելով երբեմն կը շինեն ահագին կղզիներ : Կղզին որոյ վրայ ինչպէս Ռեյնօրթ , ծովուն մակերեսին այնպէս մօտ բարձրացած էր որ նաւը չէր կրնար անցնիլ անոր վրայէն . և երբ նաւապետը տեսաւ որ նաւն անոր զար-



դերձներով : Մր. Պէնքի համակրանքին արթնցաւ դէպ ի տղան : Ի սկզբան ուշադրութեամբ նայեցաւ տղուն վրայ : Նորա վտիտ և անարիւն երեսը կը ցուցնէր թէ զրկած էր ինքզինք ամիսներով սննդարար և բաւական կերակրէ որպէս զի գնէր այս հանդերձները : Մր. Պէնքը այժմ մանրամասնաբար հարցափորձ ընելով հասկցաւ ցատով որ տղան ո՛չ կարգալ գիտէր ո՛չ գրել : «Պէտք է որ ,» ըսաւ , «սորվիս կարգալ և գրել , որպէս զի ծրարներ յանձնենք քեզի աստ և անդ տանելու : Մենք այս վիճակիդ մէջ քեզի գործ չունինք :»

Տղին դէմքն առաւ աւելի տժգոյն կերպարանք , բայց առանց գանգատանաց խօսք մը հանելու բերնէն , ա-

կամաց կը բարձրանան Սկովտիոյ վաճառատանց մէջ , բայց նա այժմ մեր գործաւորաց գլխաւորն է :»


ԼԱՍՏԻ ԱՊԱՍՏԱՆԻ

Լոնտոնի կրօնական Տետրակաց Ընկերութիւնը մարդասիրաբար ձօնած է մեզ ծովային ընտիր պատկերներ , և այս է երրորդն անոնց զորս կը հրատարակենք Տղայոց Աւետարեբի մէջ յաջորդաբար : Պատկերին ներկայացուցած դէպքն է հետևեալը .

Բաւական տարիներ առաջ Անգղիական նաւ մը Ռեյնօրթ անուն կը շրջագայէր Չինական ծովերուն մէջ ծովասպատակներու հսկողութեան համար , և ահա ինչպէս զորաւոր հոսանքի մը

նուերով կտոր կտոր պիտի ըլլար , իւր նաւազներուն շինել սուաւ տախտակներէ լաստ մը , և որովհետև լաստը շատ չէր իջներ ջուրին մէջ , նաւազք անցուցին զայն կղզւոյն վրայէն անոր ներսի կողմը գտնուած հանդարտ ջուրին մէջ : Յետոյ քանի մը տակաւ պաշար առնելով ելան լաստը , և պատկերը կը ցուցնէ թէ նաւազք կը դիտեն իրենց նաւը որ կրկին և կրկին կը զարնուի կղզւոյն մինչև որ կը ջախջախի կտոր կտոր : Անտարակոյս շատ ցաւեցաւ անոնց սիրտը , վասն զի իրենց տունն էր նաւը . և նաւազք շատ անգամ զօրաւոր սէր կը կապեն իրենց նաւուն և կը պարծին անոր գեղեցկութեան և սրբնթացութեան վրայ : Բայց Ռեյնօրթի բոլոր նաւազք աղատ-

ուեցան : Երբեմն նաւադը ուղիւնստին վրայ վտանգի ատեն ապաստանած են լաստերու, և մի միայն օգուտը զոր լաստը մատուցած է անոնց՝ այս եղած է որ փոխանակ անմիջապէս այլեայ տակ ընկղմելով մեռնելու, յապաղած է անոնց սովալլուկ մահը :



ՈՒՂԵՑՈՅԹ ԹՈՉՈՒՆ ԵՒ ՈՒՂԵՑՈՅԹ ԶՈՒԿ

Կայ թռչուն մը որ կոկորդիլոսին համար պահապան հրեշտակի պաշտօն կը վարէ, և կ'իմացունէ անոր մինչ նա կը քնանայ որ և իցէ վտանգ որ կրնայ սպառնալ : Թռչունը բնաւ վնաս չտեսներ կոկորդիլոսէն այլ կը ցատկոտէ անոր բոլորտիքը աներկիւղ, և մեծ մողէսը կը թռի թէ կը ճանչնայ պատուական ծառայութիւնները իր փոքրիկ բարեկամին որ ի փոխարէն կ'ընդունի կոկորդիլոսին կերակուրէն բաժին մը : Այսպիսի ունակութիւնք և բարբեր անսովոր չեն կենդանեաց մէջ, բայց կան պարագայք որոց մէջ դժուարին չէ տեսնել թէ ինչ օգուտ կը քաղեն մեծ կենդանիք :

Երկրորուն մէջ կայ ձուկ մը ուղեցոյց ձուկ կոչուած որ գրեթէ միշտ կը գտնուի շատ ահագին շանաձկան մը հետ : Ծանաձուկը կը խուժէ ջուրը, խաժատելով իւր ճամբուն վրայ պատահող ամէն կենդանի էակ, բայց բնաւ չվնասեր այս «ուղեցոյց»ին որ կը լողայ կը կայտուի աստ և անդ և գրեթէ շանաձկան բերանը կը մտնէ անոր որսէն մաս մը բան առնելու համար :

Ձկնորսաց կարծիքն այն է թէ այս փոքրիկ ձուկը ջրոյն մէջ կ'առաջնորդէ շանաձկան, և կը վարէ լրտեսի պաշտօն յօգուտ նորա : Կարելի է նաև որ երթայ և հրապուրէ խոշոր ձուկերը որք երբ անոր ետեէն իյնան, կը փախչի կ'ապաստանի շանաձկան քով, մինչ անոր պաշտպանը կը խուժէ անոնց վրայ, և հալածիչները գիւրին որս կ'ընէ իրեն :


ՆԵՆԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեծ ոյժերը զորս մարդ աշխարհի մէջ կը գործածէ կատարելու համար իւր գործերը, ամէնքն ալ զարմանալի են : Վառօդն ըստ երևութիւն անվնաս փողոյ նման է, բայց երբ կրակ տրուի անոր՝ կը փոխուի կազերու որ կը պահանջեն 800 անգամ տեղ քան որչափ կը գրաւէր վառօդին փոշին : Եւ տեղ գտնելու համար այս կազերը ի բաց կ'արձակեն թնդանթի ուռմբը ահեղ զօրութեամբ, կամ պատառելով ժայռը

կտոր կտոր կը շարխախեն զայն : Նմանապէս չոգին, մինչև որ մարդ տեսած չըլլայ թէ որպիսի ահագին ոյժ կ'ունենայ երբ կը ճնշուի, կ'երևի անկարող կատարելու այն մեծ բաները զորս մարդիկ ձեռք կը բերեն անոր միջոցաւ :

Բայց մինչև հիմա գտնուած ամենէն զարմանալի զօրութիւնն է երեկտրականութիւնը : Մենք կրնանք տեսնել վառօդը և չոգին, բայց երեկտրականութիւնն իւր սովորական վիճակին մէջ ոչ կրնանք տեսնել, ոչ կրնանք անոր համը առնուլ և ոչ հոտոտել զայն : Եթէ մարմին մը լեցուի երեկտրականութեամբ, մէկ ցորեն անգամ չատարիէն քիչ առաջ, մինչ երկաթուղեաւ կը ճանապարհորդէինք Միացեալ Նահանգաց մէկ նոր բնակութիւն հաստատուած կողմը, տեսանք երեկտրական լոյս մը որ կը գործածուէր յառաջ մղելու համար հոյակապ ահագին շէնք մը : Երկու քաղաքներ կը միցէին իրարու հետ ունենալ այն նոր գաւառին մայրաքաղաքը լինելու պատիւը, և անոնց մին կ'աշխատէր գիշեր ցերեկ լմնցունել կառավարութեան ապարանքի մը շինութիւնը :

Հոս դուած պատկերը կը ցուցնէ երեկտրականութեան գործածութիւնը լուսաւորելու համար արտերը այնպէս որ մարդիկ կարող ըլլան հնձել և



ՆԵՆԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՎՈՐԵԼ ԱՐՏԵՐԸ

ւերնար անոր ծանրութեան վրայ այդ պատճառաւ :

Սակայն երեկտրականութեան օգուտները շատ են : Անոր միջոցաւ լուր կը զրկուի աշխարհիս մէկ ծայրէն միւսը քանի մը երկվայրկեանի մէջ : Եւ ընդամենը պատահող մեծամեծ դէպքեր անմիջապէս կը ծանուցուին Ամերիկա, ուղիւնստին տակէն ձգուած պարանէ մը անցնող երեկտրականութեան միջոցաւ : Երեկտրականութեամբ մարդիկ կրնան խօսիլ իրարու հետ հեռաձայնի միջոցաւ, և խօսակցել իրենց բնական ձայնով, թէպէտ ըլլան հարիւրաւոր միլիոն հեռի իրարմէ : Կան երկաթուղոյ կառախումբք որ կ'ընթանան երեկտրականութեամբ, և անտարակոյս անոնց թիւը պիտի շատնայ ապագային մէջ :

Երեկտրականութեան օգուտներէն մին է անոր լոյս տալը, և այնպիսի պայծառ լոյս կրնայ արձակել երեկտրականութիւնը որ գրեթէ գիշերը ցերեկուան դարձունէ : Ասկէ չորս

հաւաքել ցորեն գիշեր ատեն : Երբ անձրևի վտանգ կենայ, շատ արժէք ունի այս, վասն զի մարդիկ կարող կ'ըլլան այսպէս աշխատիլ գիշերը :



ՏԻՔՍԻ ՎԵՑ ՍԵՆԹԵՐԸ

Ասկէ քիչ առաջ տժգոյն երեսով փոքրիկ աղջիկ մը արտորնօք մտաւ Միացեալ Նահանգաց Աննասպուրկ քաղաքին մէկ գրատունը, և ըսաւ գրքածախին, «Հաճեցէք, տէր, տալ ինձ գիրք մը որոյ մէջ գտնուի 'Թող տուէք ատ մանր տղոջը որ ինձի գան' խօսքը, և ի՞նչ է գիրք, տէր, ես շատ կ'արտորամ» : Խանութպանը ծռեցաւ և իւր ակնոցին փոշին կը մաքրէր : «Գիցուք թէ», ըսաւ, «ես չունենամ քու ուղած գիրքդ, ի՞նչ կ'ըլլայ սիրելիս» : «Ո՛հ, տէր, ես շատ պիտի ցաւիմ, շատ կը փափաքիմ ունենալ հատ մը» : Եւ փոքրիկ աղջկան ձայնը

կը գողոյէր վախնալով թէ իւր յոյժ պարսպ պիտի ելլէր :

Քարեսիրտ խանութպանը իւր ձեռաց մէջ առաւ իւր փոքրիկ յաճախորդին բարակ և փափուկ ձեռքը : «Շատ պիտի ցաւիս եթէ չունենաս այն գիրքը : Եւ ինչո՞ւ համար այսչափ կ'արտօրաս : » «Տէր, ես կիրակի օր մը դըրսրոց դացի երբ Տիկին Ուէսթ որ հոգ կը տանի ինձ հոն չէր գտնուեր, և վարժապետը կարդաց Բարի Հովուին վրայ որ այն խօսքերն ըսաւ, և գեղեցիկ տեղոյ մը վրայ ուր նա կը խնամէ իւր տղաքը, և ես կ'ուզեմ հոն երթալ : Ես այնչափ ձանձրացած եմ ըլլալէ այնպիսի տեղ մը ուր չկայ մէկը որ հոգ տանի ինձ նման փոքր աղջկան մը բաց ի Տիկին Ուէսթէ որ կ'ըսէ թէ աւելի աղէկ էր մեռնելը քան ապրելը : » «Բայց ինչո՞ւ համար այսչափ կ'արտօրաս : » «Հազա այնչափ կը գէշնայ հիմա, տէր, որ կ'ուզեմ ամէն բան իմանալ Բարի Հովուին վրայ մեռնելէս առաջ : Օտարոտի բան կ'ըլլայ տեսնել զնա, և չձանձուլ զնա : Բաց աստի, եթէ Տիկին Ուէսթ գիտնայ թէ ես հոս էի, պիտի առնու ինչ վեց սէնթըս (վաթսուն փարա) զոր շահած եմ մարդու բան տանել բերելով որպէս զի գնէի սոյն գիրքը, և ուստի կ'արտօրամ ստանալ գիրքը : »

Գրքածախը իւր ակնոցը շատ ուժով սկսաւ սրբել այս ատեն, և դարակէն գիրք մը առնելով, ըսաւ, «Ես պիտի գտնեմ հոս քու ուզած խօսքերդ, սիրելի աղջիկս, եկուր և լսէ : » Այնուհետև կարդաց սիրելի ֆրէկլին խօսքերը Ղուկասու ԺԷ, գլուխ 16 համարին մէջ, — թող տղայք բանան իրենց Աստուածաշունչները և դանեն այն տեղը — և գրքածախը պատմեց աղջկան թէ այս Բարի Հովին ինչպէս պատրաստած էր բոլորովին լուսաւոր, հանգիստ և սիրով լի բնակարան մը զինքը սիրողներուն և իրեն ծառայողներուն համար :

«Ո՛հ, ի՞նչ սիրելի, » աղաղակեց փոքրիկ յաճախորդը, չունչը կէս մը բռնուած : «Եւ կ'ըսէ, 'Եկուր' : Ես պիտի երթամ Անոր : Ո՛րչափ ժամանակէն, կը կարծես, տէր, թէ կրնամ տեսնել զնա : » «Թերևս շատ ժամանակ չանցած, » ըսաւ գրքածախը, մէկդի գարձունքով իւր երեսը : «Փողդ պահէ վեց սէնթդ, և հոս եկուր ամէն օր, և ես աւելի բաներ կարդամ քեզի այս գիրքէն : »

Փոքրիկ աղջիկը չնորհակալութիւն յայտնելով վաղեց գնաց իւր ճամբան : Հետևեալ օրն եղաւ, նաև միւս օրը,

և այսպէս անցան շատ օրեր, բայց փոքրիկ աղջիկը բնաւ չեկաւ դարձեալ լսել Յիսուսի վրայ : Օր մը բարձրախօս և անկարգ կերպարանքով կին մը վաղեց մտաւ խանութէն ներս և ըսաւ, «Տիքսի մեռաւ : Մեռաւ թովովելով Բարի Հովուի մը վրայ, և ըսաւ նաև որ առնուս այս վեց սէնթը դպրոցին առաքելական դանձանակին համար : Որովհետև չեմ ուզեր քովս պահել մեռնողի մը ստակը, առ, ահա հոս է այն : » Եւ կինը վազելով դուրս ելաւ խանութէն : Այնտեղը գրուեցան դանձանակը, և երբ Տիքսիի այս պատմութիւնը պատմուեցաւ, շատերը հետեւելով անոր օրինակին, իրենց սէնթերը բերին դանձանակը, և տարւոյն վերջը տեսնուեցաւ որ «Տիքսիի սէնթերը, » ինչպէս կը կոչուէր այն հաւաքուած ստակը, բաւական էին Չինաստան միսիոնար մը գրկելու, բերել օտար ոչխարներ այն Բարի Հովուին :

ՀԱՆՃԱՐԵՂ ԱՌՆԵՏՆԵՐ

Բնախօս մը որ իրեն ուսման առարկայ ըրած էր առնէտները, անգամ մը գտաւ որ այս կրօնը անասնոց խումբ մը կը գողնային իւր հաւկիթները : Հետաքրքրութեան շարժելով թէ ինչպէս կրնային նոքա կրել հաւկիթներն առանց կտորելու զայն, հսկեց և տեսաւ որ առնէտներէն մին կ'ելլէր հաւկիթին սնտուկին մէջ կը մտնէր, կ'առնուր հաւկիթ մը իւր թաթիկներով, կը գրկէր զայն և կը պառկէր կռնակի վրայ : Այնուհետև անոր ընկերներէն երկու առնէտներ կը քաշէին զայն պոչէն, և սոյպէս հաւկիթը կը տանէին առանց կտորելու : Հետագայն ալ պատմուած է որ կը ցուցնէ թէ ինչ հանճարեղ բաներ կ'ընեն առնէտները :

Քանի մը տարի առաջ, կ'ըսէ պատմիչը, մեր տունը լցուեցաւ բազմաթիւ առնէտներով որ իրենց բնակութիւնն հաստատած էին մառանին մէջ խոռոչին մէջ, բայց այն ատեն հոն դիզած էինք այլ և այլ մանր մուկներ : Շատ ջանացած էինք ազատուիլ այս չարերուն ձեռքէն, բայց մեր բոլոր աշխատութիւնք ի դերու երած էին, և անոնք ամէն օր իրենց չարքները կը գործէին ինչպէս սովոր էին :

Օր մը կէս օրէ ետքը սովորականէն աւելի աղմուկ լսելով, կամացուկ մը բացի մառանին դուրս, և մտնելով դարմանքով տեսայ ինն առնէտներ որոց մին երած էր գեանախնձոր պարունակող սնտուկի մը վրայ, և կարգաւ շարուած էին մինչև իրենց որջին ծակը, այսինքն վերոյիշեալ խոռոչը : Բայց ահա պատմութեան ամենէն հետաքրքրական մասը. գեանախնձորի սնտուկին վրայ կեցող առնէտը հատ մը գետին կը ձգէր ամանին վրայէն. այնուհետև

կարգին մէջ սնտուկին ամենէն մօտ գտնուող առնէտը կը գլորէր գետնախնձորը դէպ ի յաջորդ առնէտը. և այսպէս իւրաքանչիւր առնէտ իւր յաջորդին կը հասցունէր զայն՝ գլորելով մինչև որ գետնախնձորն ամբարուէր ծակին մէջ :

Ժամանակ մը դիտեցի զանոնք, բայց տեսնելով որ գետնախնձորները արագ արագ կ'անհետանային, ցրուեցի այս եռանդուն աշխատարկները ոտքս գետինը զարնելով :

ԱՂՈՅՔԻ ՄԱՆԿԱՆ

1. Մասաչ կեանքս ըրէ մի փոքրիկ լոյս, Տէր, Աշխարհէ մէջ փայլեցաւ. Բոց մ'ըլլամ վառեմ մարած ճապարհ, Յոյս տամ խաւար սիրտերու :
2. Ով Տէր, կեանքս ըրէ փոքրիկ մի ծաղիկ, Որ ամենուս խիղճ կու տայ. Ծնորէ որ փթթիմ, բուրբմ անուշիկ, Մասաչ, փափիկի թուփիս վրայ :
3. Աստուած, կեանքս ըրէ մի երգ որտառուչ, Սփոփուր ոգաւորն, Լքեալ մարդն առնու ինձմով դժ և շուշ, Դարման գտնէ զիրաւորն :
4. Ծաղիկ կեանքս ըրէ փոքրիկ ցուլ մը, Տէր, կաղին, կոյրին ոտք և աչք, Սրբեմ արտասուքն, ոչք են որք, անտեր, Մեղմեմ ինչէն ցուրտ հառաչք :

Ա. Կ. ՊԵՏԻՆՅԱՆ

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԳԷՆ

ՍՈՂՈՄՈՆԻ ՄԵ՛Կ ԱՌԱՎԸ

Ես կը բաղկանամ 69 գրեթէ

- Իմ 2. 45. 7. 62. 40. 33. 56. 22. էր օտարազգի թագաւոր մը որը կինն էր Հրեայ .
- Իմ 49. 59. 42. 60. 67. 23. էր Դանիէլի գերութեան ընկերացի մին .
- Իմ 39. 26. 41. 51. 17. 54. է ըստ Ագուրի խնայեցի միջատ մը .
- Իմ 4. 25. 50. 44. 43. 37. 45. էր եղբայրն Յեսուի .
- Իմ 61. 58. 35. 22. 69. 4. 48. 49. էր այն զոր Պողոս իւր կապանաց մէջ ծնաւ .
- Իմ 41. 34. 5. 36. էր Հրեկցի մի ամբողջ .
- Իմ 40. 31. 6. 51. 63. 48. 66. էր Սաւուղի ցեղէն Եսիլի որդեացի մին .
- Իմ 49. 69. 28. 27. 32. 65. է նշանն ուխտին Աստուծոյ .
- Իմ 42. 46. 3. 2. 20. էր միջանն որ իբր պատիժ եկաւ Փարաւոնին վրայ .
- Իմ 21. 4. 30. 43. էր շաֆն մանանայի զոր պարտ էր ուտել մէն մի իւրաքանչիւր .
- Իմ 9. 29. 16. 38. 41. 47. 51. 68. է օգին երեք բաղադրողաց մին .
- Իմ 40. 57. 52. է այն զոր որտարդք մըս կը փնտառն յանտառի .
- Իմ 53. 48. 54. 55. 67. 6. 37. 45. 36. էր այն որով փաթեցին զՅիսուս մանուկն .
- Իմ 35. 8. է շողկոտ մը .
- Իմ 44. 24. 64. են չայս պարտեցին ութերորդ գրեթէ :

Ամերիկայի Մետիստարաց քրիստոնէական կողմէն, Արտօնուէր Յ. Պ. ՊԱՐՆԸՄ Տնօրէն—Սիւրբազգի Ս. Պ. ՊԱՐՆԸՄ Յինձանձրար եօղանքն Ս. Պ. ՊԱՐՆԸՄ Կարն :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՄ

Ի ՏԵՂԱՐԱՆԻ Ա. ՅԱՆՈՐ ԳՈՍՆԱՅԱՆ